«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 26/02

ք. Երևան,Արշակունյաց 5, 417 սենյակ 14.08.2018թ. ժամը 17:30

Համաձայն 28.07.2018թ. գրությամբ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 30.07.2018թ-ին ստացված, քաղաքացի Գագիկ Ջուլիկյանի ներկայացուցիչ Արփինե Հայրապետյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Օգոստոսի14-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝ Գագիկ Ջուլիկյանի ներկայացուցիչ Արփինե Հայրապետյանը
Քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը:

Դիմումատու՝ Գագիկ Ջուլիկյանի ներկայացուցիչ Արփինե Հայրապետյանին 09.08.2018թ-ին ուղարկված ծանուցման ստացման վերաբերյալ ծանուցագիրը նիստի օրվա դրությամբ չէր ստացվել,այդ պատճառով դիմումատուն կամ նրա ներկայացուցիչը չէին ներկայացել:

Հանձնաժողովի նախահն կարծիք հարցրեց հանձնաժողովի անդամներից առանց դիմումատուի նիստը սկցելու վերաբերյալ:
Հանձնաժողովի անդամ Ռուբեն Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ դիմումատուն անենայն հավանականության ստացել է ծանուցումը,քանի որ հասցեն Երևան քաղաքում է և նամակները հասնում են 1-2 օրում,բայց եթե չի ներկայացել որեմն կարելի է եզրակացնել,որ բացի դիմում նշված փաստական հանգամանքներից,այլ ներկայացնելու բան չունի:
Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին այդ կարծիքին և որոշեցին նիստը անցկացնել առանց դիմումատուի
Հանձնաժողովի նախահն Կարգապահական ահանձնաժողովի նիստը հայտարարեց բացված:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
28.07.2018թ. գրությամբ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 30.07.2018թ-ին ստացված, Գագիկ Ջուլիկյանի ներկայացուցիչ Արփինե Հայրապետյանի դիմումի հիքով, քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների/անգործության փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, Գագիկ Ջուլիկյանի ներկայացուցիչ Արփինե Հայրապետյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝30.07.2018թ-ին ստացված դիմումը՝ քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի վերաբերյալ, հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել Գագիկ Ջուլիկյանի ներկայացուցիչ Արփինե Հայրապետյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝30.07.2018թ-ին ստացված դիմումը՝ քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի նկատմամբ «ԿՀ գործունեության և ՍԳԿ-ի կարգապահական վարույթի իրականացման» Կարգի 1.4 կետի հիմքով, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:
Հանձնաժողովի անդամ Հենրիկ Մարտիկյանը հայտնեց իր կարծիքը առ այն,որ դիմում նշված հանգամանքները առկրույթ կարող են պարունակել խառավարչի կողմից կարգապահական կանոնների խախտումներ և այդ փաստերը քննելու և կառավարչի պարզաբանումները լսելու համար անհրաժեշտ է հարուցել կարգապահական վարույթ:
Հանձնաժողովի մնացած անդամները քննարկեցին հարցը և համաձայնեցին կարծիքի հետ:
Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվեարկության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝
Գագիկ Ջուլիկյանի ներկայացուցիչ Արփինե Հայրապետյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝30.07.2018թ-ին ստացված դիմումի հիմքով՝ քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ՝
Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված դիմումը և ներկայացված փաստաթղթերը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել դիմումում մեջ նշված հանգամանքները, քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:
Հովհաննես Սողոմոնյանը նշելով, որ իր տրված պարզաբանումները կարող են ազդեցություն ունենալ կարգապահական վարույթի շրջանակներում որոշման եզրահանգելու համար, խնդրեց կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանին իրեն լսելուց հետո քննարկել հարցը:
Հանձնաժողովի անդամները քննարկեցին առաջարկը և հավանություն տվեցին կառավարչի արտահայտած կարծիքին:
Քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը նշեց, որ իր դեմ բերած բողոքում նշված փաստերը չեն համապատասխանում իրականությանը: Սնանկության գործով կառավարիչը ներկայացրեց ԱԶԴԱՐԱՐ.ԱՄ-ում տեղակայված աճուրդի հայտարարությունը, նշեց, որ աճուրդի մեջ նախապես նշված է եղել,որպես սահմանփակում, որ անշարժ գույքը բնակեցված է,այսինքն գնորդը տեղեկացված է եղել տան բանկիչների առկայության մասին ի սկզբանե: Հրապարակային սակարկություններով անշարժ գույքի/տան/ վաճառքից հետո,կազմվել է համապատասխան Արձանագրություն,իսկ 23.02.2018թ-ին նոտարական կարգով կնքվել է «Անշարժ գույքի աճուրդային առուվաճառքի պայմանագիր», որի 2.2.1.կետի՝ընդունում-հանձնում կատարելու համար գնորդը հրավիրվել է անշարժ գույքի տարածք տեղում ընդունում- հանձնում կատարելու համար:

Քանի որ ինչպես նշեցի տունը բնակեցված է և տան նախկին սեփականատերի իրերը տանից հանելու համար նրանց տեղեկացվել է,որ գույքը իրացվել է և տունը պետք է դատարկվի իրերից:
Այսինքն այդ օրը տան նախկին սեփականատերերի ներկայությունը ուղղակի պատահականություն է եղել և համընկել է նոր սեփականատերերի հետ հանձնման ընդունում կատարելը ,իրենց անձնական իրերը տնից տեղափոխելու պռոցեսին:
Հովհաննես Սողոմոնյանը նշեց, որ կազմել է ընդունման-հանձման ակտ, որը չի ստորագրվել նոր սեփականտիրոջ կողմից: Նոր սեփականատերը հրաժարվել է ընդունել նաև տան բանալիները: Իր գործառույթների շրջանակներում կատարել է ամեն ինչ պատշաճ կերպով:
Ներկայումս հին սեփականատերերի կողմից կատարվում են տան իրենց իրերից ազատելու աշխատանքներ,որից հետո կկատարվի ընդունում հանձնում:
Հանձնաժողովի անդամ Ռուբեն խալաթյանը ձայնի իրավունք վերցրեց և մասնավորապես նշեց,որ կառավարչի կողմից սահմանված կարգով կատարվել են իրացման հետ կապված բոլոր գործողությունները,կազմվել են սահմանված կարգով և արձանագրությունը և հայտարարությունը և կնքվել է պայմանագիր,իսկ գույքի նոր սեփականատիրոջ հանձնման պռոցեսը ընդհանուր պռոբլեմ է,քանի որ սնանկության վարույթի գերակշիռ մասում,անշարժ գույքերը բնակեցված են և հին բնակչի կողմից միշտ էլ ստեղծվում են անհարմար իրավիճակներ գույքը ազատելու և դա էլ բերում է նոր սեփականատիրոջը հանձնելու հետ կապված պռոբլեմների,որը նաև այս պարագայում է:
Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը համաձայնելով կարծիքի հետ պարզաբանեց,որ կառավարիչը ըստ էության հին սեփականատիրոջ անունից իրացնում է անշարժ գույքը և օրենքով սահմանված կարգով օրինական սեփականատիրոջը իրավասություն չունի վտարելու իր սեփականությունից,դրա համար սեփականատերը օրինական օգտվում է իր օգտագործման իրավունքից մինչև վերջ,բայց նոր սեփականատերերը արդեն իրենց սեփականության պաշտպանության համար կարող են և ինչպես կանոն դիմում են դատական կարգով պաշտպանության և վտարում են հին բնակչին իրենց արդեն սեփական տարածքից:
Այս պարագայում սնանկության գործով կառավարչի կողմից պետք է հայտարարվի որ անշարժ գույքը ունի սահմանափակում,բնակեցված լինելով,որպեսզի գնորդը ի սկզբանե հաշվարկի և որոշի իր անելիքները,այսինքն տվյալ դեպքում գնորդը տեղեկացված լինելով,որ տունը բնակեցված է,արդեն հաշվարկել է,կամ պիտի հաշվարկեր իր ռիսկերը և հնարավոր վնասները կամ ծախսերը և դրանց առաջանալու դեպքում չպիտի բողոքի սնանկության գործով կառավարչի գործողություններից,որ տունը իրեն չի հանձնվում արագ,առանց խոչնդոտների և կարճ ժամանակամիջոցում:
Հանձնաժողովում նախագահող Տիգրան Հարությունյանը արտահայտեց այն կարծիքը, որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ, և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն, իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ու առաջարկեց հարուցված կարգապահական վարույթը կարճել կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ,բայց հանձնարարել կառավարչին ողջամիտ ժամկետում կազմակերպել ընդունում-հանձնումը և դրա կատարման մասին գրավոր տեղեկացնել «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի Դիտորդ Խորհրդին:
Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին առաջարկին և հանձնաժողովի նախագահն առաջարկը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ

1.28.07.2018թ. գրությամբ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 30.07.2018թ-ին ստացված, քաղաքացի Գագիկ Զուլիկյանի ներկայացուցիչ Արփինե Հայրապետյանի դիմումի հիմքով, քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների

օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել,քանի որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 76-րդ հոդվածի 1-ին,5-րդ և 8-րդ մասերի պահանջների կատարման ապահովման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

3.Սույն եզրակացությունը հրապարակել Կազմակերպության ինտերնետային կայում եռօրյա ժամկետում:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Մ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան